ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2025 թվականի կարիքների համար ռեգուլյար տեսակի բենզինի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 01.11.2024թ. N 357/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 29.11.2024թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մանուկյանը, գնահատող հանձնաժողովի անդամ Վ.Խաչատրյանը և քարտուղար Գ.Ղազարյանը: Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ Գ.Երեղյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Մանուկյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «Մաքս Օիլ» ՍՊԸ (ք.Երևան, Էրեբունի-12/4)
2. «ՖԼԵԾ» ՍՊԸ (ք.Երևան, Ե.Կողբացու-30)

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Չ/Հ	Մասնակիցների անվանումները	Ապրանքի անվանումը	Ներկայացրած գները ՀՀ դրամ			պլանավորված ընդհանուր գին ՀՀ դրամ
				ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	ԱԱՀ	ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	
1	1	«ՖԼԵԾ» ՍՊԸ	Բենզին ռեգուլյար	88 000 000	20%	105 600 000	**107 800 000**
2		«Մաքս Օիլ» ՍՊԸ		88 916 667	20%	106 700 000	

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հրավերում 11.11.2024թ. կատարվել է փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

Առաջին տեղը զբաղեցրած «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

5. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. «ՖԼԵԵՇ» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. Հաշվի առնելով, որ «ՖԼԵԵՇ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված ընդհանուր գինը՝ «ՖԼԵԵՇ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
3. ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն մյուս մասնակցի հայտը մերժել:
4. ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/3 ծածկագրով (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդը "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «ՖԼԵԵՇ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «ՖԼԵԵՇ» ՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մանուկյան

Անդամներ՝ Վ.Խաչատրյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան